# ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆ. «ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԵԴ -Ի ՀԱՆԴԵՊ ԶԳԱԼԻՈՐԵՆ ԱՃԵԼ Է»

19.12.2013 12:57



ՀՀ Փաստաբանների պալատի և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից այսօր՝ դեկտեմբերի 19-ին, կազմակերպվել էր «Մարդու իրավունքների պաշտպանության վերահսկման մեխանիզմների զարգացման նպաստումը ներպետական և միջազգային ատյաններում» ծրագրի վերջնական արդյունքների ներկայացումը: Միջոցառմանը մասնակցել է նաև Արդարադատության նախարարի տեղակալ Եղիշե Կիրակոսյանը:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը ողջունելով միջոցառման մասնակիցներին՝ նշել է,-«**Չափազանց կարևոր և արդիական թեմա է քննարկվելու, քանի որ հնարավորություն ենք ունենալու պարզել, թե մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերը ինչ ժավալով և ինչ պայմաններում են իրականացվում: Գաղտնիք չէ, որ վերջին տարիներին հասարակության ուշադրությունը ՄԻԵԴ-ի հանդեպ զգալիորեն աճել է: Նույնիսկ կենսաթոշակային տարիքի քաղաքացիները իրենց կենցաղային վեճերը սպասում են լուծել Եվրոպական դատարանով**»:

Զոհրաբյանի խոսքով՝ Եվրոպական դատարանի դատական ակտը չի կարող ծառայել իր նպատակին, եթե ապահովված չէ այդ դատական ակտի արդյունավետ կատարումը: ԵԱՀԿ Հայաստանյան գրասենյակի ղեկավար դեսպան Անդրեյ Սորոկինը նույնպես բարձր է գնահատել այն աշխատանքը, որ իրականացրել են Հայաստանի ներպետական փորձագետներ Արա Ղազարյանը և Արտակ Զեյնալյանը: Վերջիններս ներկայացրել են Եվրոպական Խորհրդի նախարարների կոմիտեի վերահսկողական նոր ընթացակարգերը, անհատական բնույթի միջոցառումների և ընդհանուր բնույթի միջոցների իրագործման և ավարտված վարույթների մասին արդյունքները:

Մասնակիցները քննարկել են երրորդ կողմի մասնակցությունը ներպետական և միջազգային ատյաններում, ԵԽ Նախարարների կոմիտե ներկայացված հաղորդումները (Պողոսյանը և Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի, Խաչատրյանը և այլոք ընդդեմ Հայաստանի, Պողոսյանը և Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի, Խաչատրյանը և այլոք ընդդեմ Հայաստանի, Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի), երրորդ կողմի մասնակցությունը ներպետական և միջազգային ատյաններում, ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված գրավոր մեկնաբանությունները (amicus curiae) (Աշոտ Մանուկյանի և Արամ Բարեղամյանի դիմումների վերաբերյալ գրավոր մեկնաբանություններ, «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության դիմումի վերաբերյալ գրավոր մեկնաբանություններ և Արթուր Խաչատրյանի դիմումի վերաբերյալ գրավոր մեկնաբանություններ):

Նախորդ նորությունը: ՄԻԵԴ ՆԱԽԱԴԵՊԵՐԸ՝ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ

**Առաջարկվող նորություններ**

**20.09.2013**ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ՀՀ ՓՊ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻՆ

**25.10.2013**ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻԼԴԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

**23.10.2013**ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ (ABA/ROLI) ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԵՏ

**18.10.2013**ՀՀ ՓՊ ՆԱԽԱԳԱՀԻ 17.10.2013Թ

«ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳԾՈՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N11-Ա ՈՐՈՇՈՒՄԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })